ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/46

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանության զորքեր
Մասնակից՝ «Պահապան» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Պահապան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Պապյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, հանդերձանքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.02.2021թ.-ի թիվ 26/26/2491-2021 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության զորքերի 19/02/2021թ. թիվ 3/4/9686-21 գրության հիման վրա, 22.02.2021թ.-ին «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 22.02.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 22.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/46 համարի ծածկագիրը:

26.02.2021թ.-ին և 12.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.03.2021թ.-ին:

2. ՀՀ ոստիկանության զորքերի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանության զորքերը 19/02/2021թ. թիվ 3/4/9686-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ոստիկանության զորքերի և «Պահապան», «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ների միջև 25.12.2019թ-ին կնքված համապատասխանաբար թիվ «ՀՀ ԿԱ ՈՉ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6» և «ՀՀ ԿԱ ՈՉ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-11» ծածկագրերով՝ հանդերձանքի մատակարարման պայմանագրերի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Պահապան» և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ները ստանձնած պարտավորությունները կատարել են ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտել են 15 օրից ավելի: «Պահապան» ՍՊԸ-ն Պայմանագրով նախատեսված ժամկետներում (մինչ օրս) չի մատակարարել ներքոնշյալ ապրանքները՝

1. Տարազաբաճկոն-կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա - 30 լրակազմ,

2. Բաճկոն-տաբատ՝ կիսաբրդյա - 60 հատ,

3. Բաճկոն-փաբատ գունաքողարկող սև՝ կիսաբրդյա, կեպիով - 70 հատ,

4. Թիկնոց-ուսնոց - 538 հատ,

5. Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ - 50 հատ,

6. Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ - 114 հատ:

Իսկ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն Պայմանագրով նախատեսված ժամկետներում (մինչ օրս) չի մատակարարել 160 հատ վերարկու:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ Ձեզ միջոցներ ձեռնարկել նշված մասնակիցներին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու գործընթաց նախաձեռնելու համար:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Պահապան» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Պահապան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.02.2021թ.-ի գրությամբ դիմել է «Պահապան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.02.2021թ.-ի թիվ 26/26/2491-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 25.02.2021թ.-ին ներկայացրած թիվ Պ-015 գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

« Ուսումնասիրելով թիվ ՍՑ-ԼՕ-2021/46 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, գտնում ենք, որ նախաձեռնումը հիմնագուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը ենթակա մերժման հետևյալ պատճառներով՝

ՀՀ Ոստիկանության զորքերի և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ. կնքված N ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6 պայմանագրով «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվել է առավելագույնը մինչև 15.12.2020թ. արտադրելու և գնման ժամանակացույցի համաձայն ՀՀ Ոստիկանության զորքերին մատակարարելու 32 971 800 ՀՀ դրամ ընդհանուր

արժողությամբ 15 ապրանքատեսակներ (սրույգ ապրանքատեսակների տեսականին և քանակությունները տես պայմանգրում):

Մինչև պայմանագրի ժամկետի ավարտը «Պահապան» ՍՊԸ-ն արտադրել և ՀՀ Ոստիկանության զորքերին է մատակարարել 27 187 260 ՀՀ դրամի ընդհանուր արժողությամբ 15 տեսակի ապրանքներ, իսկ 6 տեսակի ապրանքներ, 5 784 540 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, մատակարարվել են մասնակի, որի պատճառով Ոստիկանության զորքերի ղեկավարությունը 15.02.2021թ. միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը:

Հիշյալ 6 տեսակի ապրանքները (30 լրակազմ տարազաբաճկոն-կիսաշրջագգեստ կիսաբրդյա, 60 հատ բաճկոն-տաբատ կիսաբրդյա, 70 հատ բաճկոն-տաբատ գունաքողարկող սև՝ կիսաբրդյա, կեպիով, 538 հատ թիկնոց-ուսնոց, 50 հատ վերնաշապիկ կարճաթև, սպիտակ, 114 հատ վերնաշապիկ երկարաթև սպիտակ) չեն արտադրվել ու մատակարարվել հետևյալ պատճառներով՝

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020թ. մարտ ամսին հայտարարել է կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համաճարակ: Դրա հետ կապված ՀՀ Կառավարության 16.03.2020թ. «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020թ. մարտի 16-ից մինչև սեպտեմբերի 11-ը հայտարարվել է արտակարգ դրություն, իսկ ՀՀ Կառավարության 11.09.2020թ. N 1514-Ն որոշմամբ 2020թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2021 թ. հունվարի 11-ը ՀՀ-ում սահմանվել է կարանտին:

2020թ. մարտ ամսից մինչև օրս «Պահապան» ՍՊԸ-ն Կառավարության հիշյալ որոշումների հիման վրա աշխատել է տևական ընդհատումներով: ՀՀ Պարետի 27.03.2020թ. «Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված տնտեսական

գործունեության տեսակների նկատմամբ կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ թիվ 19 որոշման հիման վրա մինչն 2020թ. մայիսի 14-ը ՍՊԸ-ն լրիվ դադարեցրել է արտադրական գործունեությունը, որից հետո աշխատելու ընթացքում բազմաթիվ աշխատողներ վարակվել են կորոնավիրուսով, որի պատճառով ՍՊԸ-ն այդ ամբողջ ընթացքում գործել է 20-25% հզորությամբ: Եղել են դեպքեր, որ որևէ արտադրամասի 1 աշխատողի վարակման պատճառով չի աշխատել ամբողջ արտադրամաս, քանի որ որպես կոնտակտավորներ արտադրամասի բոլոր աշխատողները ինքնամեկուսացվել են: Իսկ ձևարանի աշխատողների ինքնամեկուսացման պատճառով տևական ժամանակով պարալիզացվել է ողջ ֆաբրիկայի գործունեությունը:

Կորոնավիրուսի համաճարակը խիստ բացասաբար է անդրադարձել նաև հումքի, օժանդակ նյութերի և աքսեսուարների ներկրման վրա, որոնք մեր կողմից գնվում և ներկրվում են առավելապես արտասահմանից (Ռուսաստան, Բելոռուս, Թուրքիա և այլն:) Համավարակի պատճառով ամիսներ շարունակ այդ երկրների հետ փակ են եղել օդային և ցամաքային հաղորդակցությունները:

Բացի նշված պայմանագիրը, «Պահապան» ՍՊԸ-ն կնքված այլ պայմանագրեր ունի նաև այլ գերատեսչությունների հետ: Վերը հիշատակված ֆորս-մաժորային պայմանների պատճառով այդ պայմանագրերի լրիվ կամ մասնակի կատարումը ևս խոչնդոտել է վիճահարույց պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարմանը:

Չնայած հիշյալ դժվարություններին ու խոչընդոտներին «Պահապան» ՍՊԸ-ին հաջողվել է մինչև 4-րդ եռամսյակ արտադրել ե մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքների շուրջ 85%: Սակայն 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը ՀՀ-ի և ԱՀ-ի նկատմամբ անհնարին դարձրեց պայմանագրային պարտավորությունների մնացած մասի կատարումը, քանի որ Սեպտեմբերի 27-ից մինչև պատերազմի ավարտը նոյեմբերի 9-ը «Պահապան» ՍՊԸ-ն կասեցրել է բոլոր պայմանագրային պարտավորությունները, այդ ընթացքում միմիայն զբաղվելով հայկական բանակի համար համազգեստի, վրանների, քնապարկերի արտադրությամբ ու առաջնագիծ մատակարարմամբ, որի պատճառով խախտվել են ոչ միայն սույն, այլև այլ գերատեսչությունների հետ կնքված տասնյակ այլ պայմանագրերով նախատեսված մատակարարումների ժամկետները: Այդ ընթացքում փակ էին ՀՀ օդային և ցամաքային բոլոր սահմանները և պրակտիկորեն անհնարին էր մնացած շուրջ 15% ապրանքատեսակների արտադրման համար անհրաժեշտ հումքի և աքսեսուարների ներկրումը:

1. ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն ..... մասնակիցն ընդգրկվում է Գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ «պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե

ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները »:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն «ձեռնարկատիրական գործունեություն իրականացրելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն տվյալ պայմաններում արտակարգ և անկանխատեսելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով»:

Ն ՀՀ ԿԱ ՈՉ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6 պայմանագրի 7-րդ կետով սահմանված է «Պայմանագրավ պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել……»:

Առաջացած դժվարությունների և այդ պատճառով պայմանագրի մնացած մասի կատարման անհնարինության մասին 13.11.2020թ. Ն Պ-046 գրությամբ տեղյակ է պահվել Ոստիկանության զորքերի հրամանատարին: Նշված գրությամբ խնդրել ենք ստեղծված իրավիճակից դուրս գալու ելք առաջադրել, սակայն գրությանը որևէ պատասխան այդպես էլ չի տրվել:

Միայն դեկտեմբեր ամսվա սկզբներին է մասամբ բացվել ՀՀ ցամաքային և օդային սահմանները, ուստի պայմանագրով նախատեսված գործվածքեղենի և մյուս օժանդակ նյութերի ներկրում կատարել ենք միևջև դեկտեմբերի կեսերը և անմիջապես ձեռնմուխ ենք եղել նաև սույն պայմանագրով նախատեսված ապրանքների արտադրությանը, սակայն դեկտեմբերի 20-ից ներքին զորքերի բազան հրաժարվեց ապրանքներ ընդունելուց, պատճառաբանելով, որ ֆինանսատնտեսական տարին ավարտվել է, իսկ 2021թ. հունվար-փետրվար ամիսներին, չնայած մեր բազմաթիվ բանավոր խնդրանքներին, Ոստիկանության զորքերի ղեկավարությունը հրաժարվել է պատրաստի արտադրանքը ընդունելուց, պատճառաբանելով, որ 2021թ. բյուջեով այդ ապրանքների համար ֆինանսական հատկացումներ չկան, ուստի չմատակարարված ապրանքները մինչև օրս գտնվում են ՍՊԸ-ի պահեստում:

Վերոգրյալի հիման վրա, հաշվի առնելով «Պահապան» ՍՊԸ-ի գործողություններում մեղքի բացակայությունը, խնդրում ենք «Պահապան» ՍՊԸ-ին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված սույն ընթացակարգը մերժել:

Կից ուղարկվում ենք Ոստիկանության զորքերի հրամանատարին հասցեագրված գրությունը «2» թերթից, պայմանագրով նախատեսված ապրանքատեսակների արտադրության համար անհրաժեշտ գործվածքեղենի և օժանդակ նյութերի ներկրման վերաբերյալ փաստաթղթերը «9» թերթից և ՍՊԸ-ի մի քանի աշխատակիցների՝ կորոնավիրուսով հիվանդացած լինելու մասին բժշկական փաստաթղթերը «4» թերթից: Եղել են բազմաթիվ դեպքեր, որ ՍՊԸ-ի աշխատակիցները վարակվել են կորոնովիրուսով, սակայն բուժհաստատություններին չեն դիմել, բուժումը ստացել են տանը, ինքնամեկուսացմամբ:»:

4. <u>ՍՑ-LO-2021/46 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության զորքերի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարումը պետք է իրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ոչ շուտ քան 20 օրացուցային օրից, և ոչ ուշ քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

iv. Պատվիրատուի և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 02.03.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 17.02.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 16.02.2021թ.-ի թիվ 4/92 ծանուցման համաձայն՝ ՀՀ

ոստիկանության զորքերի և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6» ծածկագրով՝ հանդերձանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Պահապան» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի: Մատակարարը Պայմանագրով նախատեսված ժամկետներում (մինչ օրս) չի մատակարարել՝ տարազաբաճկոն-կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա - 30 լրակազմ, բաճկոն-տաբատ՝ կիսաբրդյա - 60 հատ, բաճկոն-տաբատ գունաքողարկող սև՝ կիսաբրդյա, կեպիով - 70 հատ, թիկնոց-ուսնոց - 538 հատ, վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ - 50 հատ, վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ - 114 հատ: Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության զորքերը 2021 թ.-ի փետրվարի 15-ին միակողմանի լուծել է ՀՀ ոստիկանության զորքերի և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6» ծածկագրով Պայմանագիրը (խախտվել է մատակարարման ժամկետները):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.02.2021թ.-ի թիվ 26/26/2491-2021 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ

իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրացուցային օրից ավելի, պայմանագրով սահմանված ժամկետից:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է

նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձն ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՓԲԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Պայմանագրի 7-րդ գլխով սահմանվել է, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության զորքերի և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ Մասնակիցը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Պայմանագրի հավելված 1-ով

սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը պետք է իրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ոչ շուտ քան 20 օրացուցային օրից, և ոչ ուշ քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը: Պատվիրատուի և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 02.03.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը:

Պայմանագրի շրջանակներում «Պահապան» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի: Մատակարարը Պայմանագրով նախատեսված ժամկետներում չի մատակարարել՝ տարազաբաճկոն-կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա - 30 լրակազմ, բաճկոն-տաբատ՝ կիսաբրդյա - 60 հատ, բաճկոն-տաբատ գունաքողարկող սև՝ կիսաբրդյա, կեպիով - 70 հատ, թիկնոց-ուսնոց - 538 հատ, վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ - 50 հատ, վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ - 114 հատ: Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության զորքերը 2021 թ-ի փետրվարի 15-ին միակողմանի լուծել է ՀՀ ոստիկանության զորքերի և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6» ծածկագրով Պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 17.02.2021թ.-ին հրապարակելով Պայմանագրի միակողմանի լուծման մասին 16.02.2021թ.-ի թիվ 4/92 ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքը չմատակարարելը պայմանավորված է եղել արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է՝ հաշվի առնելով այն, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020 թվականի մարտին

հայտարարել է կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված համավարակ, և ամբողջ աշխարհում համաճարակային իրավիճակը շարունակում է մնալ լարված, այն, որ Հայաստանի Հանրապետությունում ևս հիվանդությունը ստացել է լայնածավալ տարածում, և երկրում առաջացել է համաճարակ՝ հիմք հանդիսանալով արտակարգ իրավիճակի առաջացման, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.09.2020թ.-ի «կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում՝ 2020 թվականի սեպտեմբերի 11-ից, ժամը 17:00-ից մինչև 2021 թվականի հունվարի 11-ը ներառյալ կարանտին սահմանելու մասին թիվ 1514-Ն որոշումը, ինչպես նաև պայմանավորված՝ ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի սեպտեմբերի 11-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հետ:

Բողոքներ քննող անձը վերոնշյալները քննարկելով նաև «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի համատեքստում, հարկ է համարում փաստել, որ արտակարգ դրությունը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության իրավական հատուկ ռեժիմ է, որը սահմանվում է պետության ամբողջ տարածքում կամ առանձին հատվածներում ներքին և արտաքին վտանգներից պաշտպանվելու, ինչպես նաև երկրի սահմանադրական ու հասարակական կարգը պահպանելու նպատակով (հոդված 1): Արտակարգ դրության ռեժիմն ենթադրում է քաղաքացիների, իրավաբանական անձանց ազատությունների և իրավունքների սահմանափակում, ինչպես նաև նրանց համար լրացուցիչ պարտականությունների սահմանում (հոդված 4):

Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն, ՀՀ կառավարության 11.09.2020թ.-ի «կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» և ՀՀ կառավարության 27.09.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշումները, փաստում է, որ ստեղծված ֆորս-մաժորային իրավիճակն օբյեկտիվորեն կարող էր ազդել Մասնակցի ստանձնած պարտավորությունների

կատարման վրա, քանի որ Պայմանագիրը և դրա հիման վրա կնքված Համաձայնագիրը կնքվել են մինչև Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելը, որպիսի պայմաններում անհաղթահարելի ուժի ազդեցության հիմքով Պայմանագրով (Համաձայնագրով) ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ չկատարելու համար Մասնակիցը կարող է ազատվել պատասխանատվությունից, քանի որ, ինչպես վերը նշվեց, **անհաղթահարելի ուժի ազդեցությունը պետք է ծագի պայմանագիրը (համաձայնագիրը) կնքելուց հետո**, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Բողոքներ քննող անձը, վերոնշյալները քննարկելով նաև «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի համատեքստում, հարկ է համարում փաստել, որ ռազմական դրությունը բացառապես Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքում իրականացվող ժամանակավոր միջոցառում է, որն իրենից ներկայացնում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության հատուկ իրավական ռեժիմ և թույլատրում է իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումների և նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների սահմանում (հոդված 1): Ռազմական դրություն հայտարարելու նպատակն է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և տնտեսության զորահավաքային ծավալման համար առավելագույն բարենպաստ պայմանների ստեղծմամբ դիմակայել Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակմանը կամ կանխել դրա անմիջական վտանգը, ինչպես նաև ապահովել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեությունն ու մարդկանց կյանքի և անվտանգության պաշտպանությունը ռազմական դրության պայմաններում (հոդված 3):

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի

համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Պահապան» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունների չկատարման հանգամանքն ելել է օբյեկտիվ հիմքերից՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու հանգամանքով, որի արդյունքում առաջացած պատճառներն անհնարին են դարձրել Մասնակցի կողմից Պայմանագրով ստանձնած պարտա-վորությունների պատշաճ կատարումը՝ վերջինիս կամքից անկախ հանգամանքներով:

Ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.02.2021թ.-ի թիվ 26/26/2491-2021 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/46 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**